

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՆԵՏՄԵՆԹ

## ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի, փնտրեսագիտության և կառավարման  
ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր*

### ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՀԱՐԺԵՐԻ ԱՐԴԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ. ԳԻՏԵԼԻՔԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՅԴ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հասարակական-տնտեսական զարգացման գոյություն ունեցող հայեցակարգերից յուրաքանչյուրին՝ ժողովրդագրական, աշխարհագրական, մարքսիստական, տեխնոլոգիական և այլն, բնորոշ են հստակ առանձնահատկություններ: Մի կողմից՝ ամբողջականության ձգտումը, մյուս կողմից՝ բազմազանությունը, մի կողմից՝ կենտրոնացման ձգտումը, մյուս կողմից՝ ապակենտրոնացումը, մի կողմից՝ ընդհանրացման, մյուս կողմից՝ տարանջատման, մի կողմից՝ փոփոխականության, մյուս կողմից՝ կայունացման ձգտումը, երկարաժամկետ հատվածում տանելով տնտեսական աճի ու հասարակության զարգացվածության համապատասխան մակարդակի, հանգեցրել են հասարակական-տնտեսական որակապես այլ համակարգի: Զարգացման այս ճանապարհը հիմնականում նույնն է բոլոր հասարակական-տնտեսական համակարգերի, ինչպես նաև բոլոր ազգերի ու երկրների համար: Տարբեր են լինում զարգացման պայմանները և, որպես հետևանք՝ արդյունքները:

**Հանգուցային բառեր և արտահայտություններ.** հասարակական-տնտեսական զարգացում, տնտեսական աճ - տնտեսական զարգացում փոխազդեցություն, հայեցակարգային փոխակերպումներ, հասարակական - տնտեսա-

կան զարգացման փուլեր, զարգացման գերակայություն, գիտելիք, գիտելիքահեն տնտեսություն, կրթություն, կրթված հասարակություն, որակավորված աշխատուժ:

Հասարակական-տնտեսական զարգացման արդի ժամանակաշրջանը, ուղեկցվելով գաղափարախոսական, հայեցակարգային, քաղաքական, կառուցվածքային լուրջ փոփոխություններով և շրջադարձային փոխակերպումներով, այսօր ստացել է բավական հակասական դրսևորումներ՝ առաջ քաշելով նոր մարտահրավերներ: Սա էլ, իր հերթին, հանգեցրել է զարգացման նոր գերակայությունների ու մոտեցումների հստակեցման անհրաժեշտության:

**Հասարակական և տնտեսական համակարգերի փոխազդեցությունները. զարգացման առանձնահատկությունները**

Հասարակա-տնտեսական զարգացման որակական ու քանակական առանձնահատկությունների վերաբերյալ առավել ամբողջական գնահատականներ տալու համար անհրաժեշտ է հասարակական և տնտեսական երևույթները դիտարկել դրանց փոխկապակցվածության և փոխազդեցության ներքո որպես մեկ ամբողջական համակարգ:

Ըստ Համաշխարհային բանկի՝ հասարակական-տնտեսական զարգա-

ցումը ներկայացնում է տնտեսության որակական փոփոխությունը և վերակառուցումը՝ պայմանավորված տեխնոլոգիական և հասարակական առաջընթացով: Տնտեսական զարգացման գլխավոր ցուցանիշը Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կամ Համախառն ազգային արդյունքն (ՀԱԱ) է՝ մեկ շնչի հաշվով, ինչն արտահայտում է տնտեսական արտադրողականության աճը և երկրի բնակչության միջին նյութական բարեկեցությունը [1, էջ 9]: Այսինքն՝ հասարակական կյանքի տնտեսական միջավայրը սոցիումի այն ամենակարևոր բաղադրիչներից մեկն է, որը որոշում է հասարակությունում տեղի ունեցող գործընթացները: Տնտեսական զարգացումն ապահովում է հասարակության անդամների կենսամակարդակը: Կենսամակարդակի որոշիչ գործոն է ոչ միայն բնակչությանը հարմարավետ և բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ ապրանքներով և ծառայություններով ապահովումը, այլ նաև տնտեսական գործուն մեխանիզմների առկայությունը: Այստեղ առանձնապես կարևորվում են կենսաապահովման խնդիրների շուրջ հասարակության անդամների միավորման և արդյունավետ հասարակական փոխհարաբերությունների ապահովման մեխանիզմները: Տնտեսությունը կարևոր բովանդակային նշանակություն ունի նաև քաղաքական, իրավական, հոգևոր, մշակութային կյանքում:

Հասարակակությունն էլ, իր հերթին, փոխազդելով տնտեսական գործընթացների վրա, կանխորոշում է հասարակական-տնտեսական առաջընթացի բնույթը: Այս տեսակետից բավական հետաքրքիր են հասարակական-տնտեսական վերջին զարգացումների ներքո հասարակական, մասնավորապես մարդկային ներուժի կարևորման և տնտեսական գործոնների նկատմամբ նրանց գերակա դերի շուրջ տեղի ունեցող լայն քննարկումները: Գիտելիքահեն տնտեսության զարգացմանը զուգըն-

թաց մեծանում է ըմբռնումն այն բանի, որ տնտեսական արդյունքները որոշվում են ոչ այնքան ռեսուրսների առկայությամբ, որքան այդ ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ, սոցիալական փոխգործակցության բնույթով, հասարակությունում փոխըմբռնման ու վստահության մակարդակով, նրանում գերիշխող արժեքային ու վարքագծային նորմերով: Այստեղից են սկիզբ առնում երկրների զարգացման մակարդակների միջև տարբերությունները: Այստեղ առանձնապես կարևորվում է երկրի մրցունակության նոր չափանիշների արդյունավետորեն կյանքի կոչման և մրցակցային այնպիսի միջավայրի ձևավորման խնդիրը, որի պայմաններում տնտեսական աճը, ուղեկցվելով տնտեսական զարգացմամբ, կապահովի հասարակական-տնտեսական առաջընթաց:

**Տնտեսական աճ – տնտեսական զարգացում փոխազդեցությունները և դրանց դրսևորումը հասարակական-տնտեսական առաջընթացում**

Տնտեսական աճի վերաբերյալ գրականության և տնտեսական քաղաքականության մեջ երկար ժամանակ տիրապետող է եղել այն գաղափարը, որ գերխնդիրը հենց տնտեսական աճն է. բավական է այն լուծել, կլուծվեն նաև մյուս խնդիրները: Վերջին տասնամյակների զարգացումները ստիպում են վերանայել այդ մոտեցումը:

Տնտեսական աճը հասարակական-տնտեսական զարգացման անհրաժեշտ պայմաններից է և հանդիսանում է հիմնական մակրոտնտեսական նպատակներից մեկը, սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, այն նպաստում է զարգացմանը, եթե արդյունավետորեն համակցվում է զարգացման համար կարևոր նշանակություն ունեցող մյուս նպատակների հետ: Հակառակ դեպքում, չնայած տնտեսական աճն-տնտեսական զարգացում անմիջական փոխկապվածությանը, ժամանակի մեջ տեղի են ունենում տարաբնույթ, երբեմն հակասա-

կան դրսևորումներ:

Տնտեսական աճը տնտեսական զարգացման միայն մեկ չափորոշիչն ու բաղկացուցիչ մասն է, իսկ տնտեսական զարգացումն արտահայտում է հասարակական-տնտեսական ամբողջ համակարգի առաջընթացը: Այս տեսակետից տնտեսական զարգացումը շատ ավելի բարդ է: Այն, ընդգրկելով հասարակական-տնտեսական զարգացման բոլոր գործընթացներն, արտացոլվում է հասարակական-տնտեսական համակարգային բաղադրիչների զարգացման մակարդակի վրա: Ինչպես բնորոշում է Ս. Կուզնեցը, ցանկացած երկրի տնտեսական աճը նրա բնակչությանն ավելի ու ավելի բազմազան տնտեսական բարիքներ առաջարկելու կարողության երկարժամկետ մեծացումն է՝ հիմնված առաջադիմող տեխնոլոգիայի և պահանջվող ինստիտուցիոնալ ու գաղափարական կարգավորումների վրա [2, էջ 247]: Իսկապես, արդի տնտեսության որակյալ աճը ոչ մի կերպ չի կարող շրջանցել տեխնոլոգիական արդիականացումը՝ որպես տնտեսական աճի որակական բարելավման հիմնական աղբյուր: Հաշվի առնելով, որ տնտեսական աճը ինքնաբավ, մեկուսի գործընթաց չէ, աննպաստ ինստիտուցիոնալ պայմաններում բացառվում է տևական ինքնապահպանվող և որակյալ աճի հնարավորությունը: Այս տեսակետից շատ կարևոր է հասարակական-տնտեսական զարգացման այնպիսի չափորոշիչների և մոտեցումների հստակեցման անհրաժեշտությունը, որոնք կապահովեն տնտեսական զարգացմամբ ուղեկցվող տնտեսական աճ, այսպես ասած՝ որակյալ տնտեսական աճ [3, էջ 97 ]: Ասվածի արդիականության մասին է վկայում այն փաստը, որ չնայած պատմական որոշակի ժամանակահատվածում տնտեսական աճն ուղեկցվել է կայուն տնտեսական զարգացմամբ, այնուամենայնիվ, հասնելով զարգացման որոշակի մակարդակի, տնտեսական աճը հանգեցրել

է նաև որոշակի հետընթացի՝ պայմանավորված ինչպես գաղափարախոսական և հայեցակարգային ուղենիշերի վերանայման անհրաժեշտությամբ, այնպես էլ տնտեսության ոչ օպտիմալ կառուցվածքով, ոչ արդյունավետ ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ հենքով, եկամուտների ու հարստության անհավասար բաշխվածությամբ, միջին խավի բացակայությամբ, կրթվածության ոչ համարժեք մակարդակով ու որակավորված աշխատուժի սակավությամբ և այլն [4, էջ 221-250]: Ասվածն էլ ավելի է ամրապնդում այն միտքը, որ այնքան կարևոր չէ համապատասխան ռեսուրսներով (մասնավորապես գազ, նավթ և այլն) ապահովված լինելու փաստը, որքան առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործումը: Ավելին, ինչպես վկայում է տնտեսական զարգացման ժամանակակից պատմությունը, երկրները չեն կարող գնալ երկարատև տնտեսական աճի ճանապարհով, քանի որ արդի աշխարհը չափազանց դինամիկ, փոփոխական և հակասական է՝ դա թույլ տալու համար [5]:

Այսպիսով՝ հասարակական-տնտեսական զարգացումը, ավանդաբար իրականացվելով ի հաշիվ տնտեսական աճի, և ապահովելով կենսամակարդակի և բարեկեցության համարժեք պայմաններ, այսօր միշտ չէ, որ այն ընթանում է տնտեսական աճին ներդաշնակ՝ կասկածի տակ դնելով ավանդաբար ձևավորված պատկերացումները [5]: Այստեղ առանձնապես հետաքրքիր կարող է լինել հասարակական-տնտեսական հայեցակարգային զարգացումների ներքո ձևավորված տնտեսական աճի տեսությունների համեմատականը: Այսպես, եթե տնտեսական աճի ներքեյնսյան մոդելների հիմքում, որպես մակրոտնտեսական հավասարակշռվածության ապահովման հիմնական գործոն, ընկած է պահանջարկը (պահանջարկի և կոնկրետ ապրանքի միջև կապ արտահայտող միագործոն մոդել, որտեղ

տնտեսական աճը ֆունկցիա է կապիտալ ներդրումներից և եկամուտների աճից), ապա նեոդասական մոդելներում տնտեսական աճը դիտարկվում է արտադրության գործոնների կարևորման տեսանկյունից<sup>1</sup>: Այս մոդելը կոչվում է արտադրական ֆունկցիա, համաձայն որի՝ ապրանքի ծավալը (առաջարկ) որոշվում է որպես յուրաքանչյուր գործոնի կողմից արտադրված սահմանային արդյունքների գումար: Տնտեսական աճի ուսումնասիրման սկզբնական փուլում աճի կարևոր գործոններ են դիտարկվել արտադրական ֆունկցիայի տարրերը (2. Կոր, Պ. Դուգլաս և այլն) [6, էջ 139-165], որտեղ դիտարկվում են գործոնների միայն քանակական փոխազդեցությունները՝ հաշվի չառնելով դրանց որակական բնութագրերը: Այնուհետև, որպես տնտեսական աճի գլխավոր աղբյուր է դիտարկվել արտադրական ֆունկցիայի տարրերի արդյունավետ օգտագործման շնորհիվ նվաճված արտադրողականության աճը (Ռ. Սոլոու, Ա. Քենդրիկ և այլն) [7, էջ 324-330, 8 էջ 14-21, 9, էջ 65-94]: Սոլոուի նեոդասական մոդելն արտահայտում է տնտեսական աճի հավասարակշռության հնարավորությունը լրիվ զբաղվածության և արտադրական հզորությունների լրիվ օգտագործման պայմաններում, ինչպես նաև՝ տնտեսական աճի կայունությունը (շուկայական ինքնակարգավորվող մեխանիզմների օգնությամբ տնտեսական համակարգի հավասարակշռված զարգացման հետագծին վերադառնալու ունակությունը): Առաջ գնալով՝ տնտեսական աճի գործոնների հետաքրքիր վերլուծություն է կատարել Էդվարդ Ֆ. Դենիսոնը՝ առաջարկելով այդ գործոնների առավել ձգձգիտ գնահատման բավական ինքնատիպ մեթոդներ: Այդ մեթոդները հաշվի

են առնում աշխատանքային ծախսումների որակական փոփոխությունները, արտադրության մասշտաբների ընդլայնումից բխող տնտեսումը, կրթության մեջ ներդրումները, գնահատում են ավելի քիչ արտադրողական ոլորտից առավել արտադրողական ոլորտ ռեսուրսների վերաբաշխման ազդեցությունը և այլ [10, էջ 157-165]: Այստեղ առանձնապես մեծ դեր է կատարում տեխնիկական առաջընթացը՝ ներառյալ դրա հետ կապված արտադրական և կազմակերպչա-կառավարչական գիտելիքները: Ընդ որում, որքան դինամիկ է տեխնոլոգիական առաջընթացը և զանգվածային՝ դրա արդյունքների կիրառումը, այնքան տնտեսական աճի որակական բնութագրերի գերակայությունը դառնում է նշանակալից: Այս տեսակետից բավական ընդհանրական է հայտնի ամերիկացի տնտեսագետ Մայմոն Կուզնեցի մոտեցումը, համաձայն որի՝ տնտեսական աճը՝ տեխնոլոգիական առաջընթացի և ինստիտուցիոնալ ու գաղափարական փոփոխությունների ճանապարհով, բնակչության գնալով աճող պահանջումները բավարարելու տնտեսության ունակությունն է [2, էջ 247, 11, էջ 90, 12, էջ 27, 13, էջ 135]: Այնուհետև, դրսևորելով ավելի խորքային մոտեցում՝ ստեղծվեցին տնտեսական աճի որակական նոր՝ ներծին (էնդոգեն) մոդելներ, որտեղ աճին նպաստող տեխնոլոգիական փոփոխությունները դիտարկվում են որպես ներքին գործոններ, դրանք՝ որպես նոր փոփոխական (օրինակ՝ մարդկային կապիտալը), ներառելով արտադրական ֆունկցիայում: Այսպես՝ 1980թ. ամերիկացի տնտեսագետ Պոլ Ռոմերի և նրա հետևորդների կողմից մշակված «Աճի նոր տեսությունը» [12], նեոդասական մոդելում առաջարկելով փոփոխություն, գիտելիքը դիտարկեց որպես տնտեսական աճի խթանման հիմնական գործոն և կապիտալի հիմնական ձև: Այդ մոդելի հիման վրա Ռոմերը ցույց տվեց, որ այն երկրներ

1—\*Տնտեսական աճի գործոնները կոնկրետ իրավիճակով պայմանավորված այն երևույթներն ու գործընթացներն են, որոնք արտահայտում են արտադրության իրական ծավալի ավելացման և տնտեսական աճի արդյունավետության ու որակի բարձրացման հնարավորությունները:

րը, որոնք ավելի շատ ներդրումներ կատարեն մարդկային կապիտալում, կունենան զարգացման առավել բարձր տեմպեր [12, էջ 27]: Մեկ այլ մոդելի համաձայն, որը մշակվել է Ֆ. Էգիոնի և Պ. Հոուիտի կողմից, էնդոգեն տնտեսական աճը կապված է նորարարությունների և տեխնիկական առաջընթացի հետ [14, էջ 322-352]: Մենքյու-Ռոմեր-Ուելլ մոդելում, ինչն ըստ էության Կորբ-Ռուզլասի և Սոլովուի կողմից մշակված աճի մոդելների փոփոխությունն (մոդիֆիկացիա) է, կապիտալը տարանջատելով մարդկայինի և ֆիզիկականի, ապացուցվում է, որ տնտեսական աճ և կայունություն հնարավոր է ապահովել սրանց ճիշտ հարաբերակցության պայմաններում [11, էջ 90]:

Այսպիսով՝ տնտեսական աճի տեսությունների արդի փոփոխությունները, հանգեցնելով էնդոգեն աճի տեսությունների կարևորմանը, որպես գործոնային գերակայություն է դիտարկում գիտելիքը՝ ձևավորելով կապ տնտեսական աճի մեխանիզմների և նոր գիտելիքի ստացման ու կուտակման գործընթացների միջև, այնուհետև, նյութականացվելով տեխնոլոգիական նորամուծություններում, ապահովում աճ: Սա արմատապես փոխելով տնտեսական աճի և զարգացման վերաբերյալ ավանդական պատկերացումները՝ այսօր որպես երկարաժամկետ կայուն աճ ապահովող նախապայմանների շարքում կարևորվում է որակյալ մարդկային կապիտալի ստեղծման և հասարակության արդյունավետ ձևավորման խնդիրը: Սա էլ, իր հերթին, կարևորում է հասարակության կրթական մակարդակի բարձրացումը, որտեղ կարևորվում են ոչ միայն մասնագիտական որակավորման, այլ նաև սահմանի ու հասարակության ընդհանուր կրթվածության և տեղեկացվածության մակարդակի ապահովման հարցերը: Հետքրքիր է, որ հասարակական-տնտեսական ներուժի բացահայտման ու գնահատման նպատակով հայ ազգաբնակչության շրջանում իրականացված

հարցման արդյունքները [15, էջ 17] նույնպես վկայում են մարդկային ռեսուրսի և գիտելիքի՝ որպես աճի ու զարգացման գործոնների առաջնահերթ կարևորման մասին: Ասվածն առանձնապես կարևոր է գիտելիքահեն տնտեսությանն անցման արդի փուլում, երբ նորամուծությունները տնտեսական աճի գլխավոր շարժիչ ուժի վերածելու և հասարակական-տնտեսական զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է, որ նոր գիտելիքները դառնան հասարակության կողմից պահանջվող արդյունք: Միայն այս ճանապարհով գիտելիքը կստեղծի նոր հնարավորություններ՝ դարձնելով մարտահրավերներին դիմակայելու և տնտեսության ու հասարակության անընդհատ փոփոխվող պահանջները բավարարելու համար:

### **Հասարակական-տնտեսական զարգացման արդի դրսևորումները. գիտելիքը՝ որպես շարժիչ ուժ**

Գլոբալ զարգացումների ներկա փուլի կարևորագույն առանձնահատկություններից է անցումը նյութական արտադրության ոլորտներից դեպի գիտատար և բարձր տեխնոլոգիաների ոլորտներ, ինչը որոշիչ ազդեցություն է թողնում հասարակական կեցության (ինչպես գուտ տնտեսական, այնպես էլ սոցիալական, էկոլոգիական, ժողովրդագրական և այլ) վերափոխումների վրա: Գործունեության տվյալ ձևը շատ զարգացած երկրներում այսօր արդեն ընդգրկում է աշխատունակ բնակչության շուրջ 70%-ը [16, էջ 360, 385] և ունի աճելու միտում՝ ՀՆԱ-ում անընդհատ մեծացնելով տեղեկատվական տնտեսության ոլորտի մասնաբաժինը: Զարգացած երկրներում է կենտրոնացված աշխարհի տնտեսական և գիտատեխնիկական ներուժի մոտ 75%-ը [16, էջ 360, 486]: Այստեղ հատուկ տեղ են զբաղեցնում զարգացող, մասնավորապես՝ անցումային երկրները, որոնցից շատերը դեռևս պահպանում են զարգացած երկրներից իրենց կախվածությունը: Տեղեկատվության առա-

վել հասանելի լինելու արդյունքում շատ զարգացած երկրներ փոխել են իրենց նկարագիրը. առավել դինամիկ և արդյունավետ է դարձել տնտեսությունը, մեծացել է տնտեսության ձկունությունը և բազմազանեցումը (դիվերսիֆիկացումը), բարձրացել է կյանքի որակը: Միաժամանակ, գիտա-տեխնիկական առաջընթացը հանգեցրել է մրցակցության ուժեղացմանը՝ գլոբալ տնտեսական շուկայում առաջացնելով լրացուցիչ դժվարություններ, մասնավորապես բարձրացել է տնտեսության համակենտրոնացման մակարդակը, արագացել են կապիտալի և աշխատանքի միջազգային միգրացիայի տեմպերը, տեղի են ունենում ֆինանսա-տնտեսական լուրջ տեղաշարժեր՝ անկանխատեսելի հետևանքներով:

Հասարակական-տնտեսական արդի զարգացումների ներքո աշխարհը դարձել է մի կողմից առավել հասանելի ու չափազանց դինամիկ, մյուս կողմից՝ խիստ անկանխատեսելի և անվերահսկելի: Գոյություն չունեն առաջընթացի հստակ և համընդհանուր կիրառելի բանաձևեր: Այստեղ ակնհայտ է մի բան. անհրաժեշտ է նոր հայեցակարգային ուղենիշ և նոր մոտեցում՝ որտեղ առանցքային է գիտելիքի և կրթության դերը:

Ե՛վ տնտեսական, և՛ հասարակական կյանքում տեղի ունեցող երևույթների մեկնաբանությունները հաճախ որոնվում են տվյալ երկրի մշակութային առանձնահատկությունների և ազգային մտածողության շրջանակներում: Հայաստանյան արդի իրականության մեջ նույնպես առանցքային է գիտելիքի դերը, ինչն օրակարգային է դարձնում այդ դերի ձիշտ ընկալման, գիտելիքի յուրացման և կիրառման ուղիների հաղթահարման, և այս համատեքստում կրթության նպատակային զարգացման խնդիրները:

**Հասարակական-տնտեսական զարգացման արդի միտումները Հայաստանում. գիտելիքը և կրթությունն**

## **այդ համատեքստում**

Համաձայն Համաշխարհային տնտեսական գազաթաժողովի «Գլոբալ մրցունակության զեկույցի» գնահատականների՝ Հայաստանը, ցուցաբերելով մրցունակության ցուցանիշների տարաբնույթ տեղաշարժեր, վերջին տասը տարիների ընթացքում պարբերաբար հայտնվել է զարգացման առաջին (ռեսուրսների վրա հիմնված զարգացում) կամ երկրորդ (արդյունավետության վրա հիմնված զարգացում) փուլերում<sup>1</sup> [16, էջ 48-50]: Եթե առաջին՝ ռեսուրսային զարգացման փուլում երկրները հիմնված են էժան գործոնների շահագործման վրա, ապա երկրորդ՝ արդյունավետության վրա հիմնված փուլում, որտեղ զարգացումը տեղի է ունենում հետևյալ տրամաբանական շղթայի ներքո՝ լավ բարձրագույն կրթության և վերապատրաստումների արդյունքում աշխատուժի որակը բարձրանում է, շուկաները գործում են ավելի բարձր արդյունավետությամբ, նորամուծություններն աստիճանաբար դառնում են գերակշռող: Երրորդ փուլում երկրները զարգանում են նորամուծությունների վրա հիմնված եզակի արժեքների ստեղծման միջոցով: Ընդ որում, եթե գործոնային աճի վրա հիմնված տնտեսությունները մրցում են միայն գնի միջոցով, հետևաբար շատ զգայուն են համաշխարհային տնտեսական ցիկլերի, ապրանքների գների և փոխարժեքների տատանումների նկատմամբ, ապա ներդրումային աճի վրա հիմնված տնտեսությունները զգյուն են ֆինանսական ճգնաժամերի և արտաքին (կոնկրետ տնտեսության ճյուղերին առնչվող) ցնցումների նկատմամբ, սակայն այնքան էլ կախված չեն գնային

1—\*\*Համաձայն Համաշխարհային տնտեսական գազաթաժողովի՝ Գլոբալ մրցունակության զեկույցի փուլային զարգացման հայեցակարգի, երկրներն, ըստ զարգացման գործոնային բնորոշիչների, կարող են հայտնվել զարգացման երեք ագրեգացված փուլերից որևէ մեկում. 1) ռեսուրսների վրա հիմնված փուլ; 2) արդյունավետության վրա հիմնված փուլ; 3) նորարարությունների վրա հիմնված փուլ:

գործոններից: Հետաքրքիր է նորամուծությունների վրա հիմնված տնտեսությունների բնութագիրը. դիվերսիկացված տնտեսություն և բավական կայուն՝ արտաքին ցնցումների նկատմամբ [17, էջ 38]: Ասվածը մեկ անգամ ևս վկայում է, որ գլոբալ մրցունակության մակարդակը բարձրացնելու համար Հայաստանին անհրաժեշտ է հնարավորինս կարճ ժամանակահատվածում ապահովել կայուն անցում երկրորդ՝ արդյունավետության վրա հիմնված զարգացման փուլ և նորագույն տեխնոլոգիաների ներդրման միջոցով կատարել անցում երրորդ՝ գիտելիքահեն և մշակութային զարգացման փուլ: Անցման այս գործընթացում, առանձնապես երրորդ փուլում կարևոր արտադրական ռեսուրս է դիտարկվում մարդն իր գիտելիքներով, հմտություններով ու ստեղծած արդյունքն արդյունավետորեն կիրառելու կարողություններով: Այս տեսակետից Հայաստանի համար կարևոր նշանակություն են ստանում կրթության ոլորտը, տեղեկատվական-հաղորդակցման շուկաները, նորարարությունների մշակումն ու արտադրությունը, մտավոր ծառայությունների մատուցումը (խորհրդակցություններ, տեղեկատվական միջնորդություն, վերլուծություն, մարքեթինգ) և այլն: Այստեղ առանցքային է կրթության, հատկապես բարձրագույն և հետբուհական կրթության դերը՝ որպես հասարակական-տնտեսական համակարգի առաջանցիկ զարգացման ու միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովման կարևոր գրավական: Այս առումով կարելի է փաստել, որ կրթությունը միայն տեխնոլոգիական ոլորտ չէ, և, որ այն ունի ոչ միայն կրթություն իրականացնելու, այլ նաև հասարակական գիտակցության ձևավորման կարևորագույն գործառույթ: Այս հանգամանքն այսօր էլ ավելի է կարևորում կրթության դերը՝ որպես սոցիումի հիմք: Այսպիսով՝ միայն կրթված հասարակությունը և որակավորված աշխատուժը

կարող են դառնալ գիտելիքահեն տնտեսությանն անցման արդի հրամայականի հիմնական երաշխավորը և երկրի զարգացման հնարավորությունների հիմնական աղբյուրը:

Հասարակական-տնտեսական զարգացման փուլային անցումները պահանջում են առկա խնդիրների և հնարավորությունների բացահայտում, համապատասխան նախադրյալների ապահովում և անելիքների հստակեցում:

### **Գիտելիքահեն տնտեսությանն անցման խնդիրները և մոտեցումները Հայաստանում**

Անցումը գիտելիքահեն տնտեսությանը ենթադրում է հասարակական-տնտեսական զարգացման փուլային ուղենիշերի կյանքի կոչմանն ուղղված հաջորդական քայլերի և մոտեցումների իրականացում:

«Գիտելիքահեն տնտեսություն» նշանակում է գիտելիքի ստացման, յուրացման, օգտագործման և փոխանցման գործընթացների միջոցով, տնտեսական համակարգի արդիականացում ու հասարակական-տնտեսական առաջընթաց զարգացում: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է կենտրոնանալ գիտելիքի զարգացումը և տեղայնացումը պայմանավորող գործոնների համակարգային զարգացման խնդիրների ու մոտեցումների վրա:

Համաշխարհային բանկը «Գիտելիքի զարգացում» ծրագրի շրջանակներում մշակված գիտելիքի գնահատման մեթոդաբանության (ԳԳՄ)՝ [19, էջ 38] ներքո դիտարկելով քանակական և

1—\*\*\* ԳԳՄ-ն (<http://www.worldbank.org/kam>) ներառում է քանակական և որակական 76 փոփոխականներ, որոնք օգնում են գնահատել երկրի նախնական դիրքը ԳՏ շրջանակի չորս սյուների առանցքային բաղադրիչների առումով: Մեթոդաբանությունը բաղկացած է այս փոփոխականներից յուրաքանչյուրին համապատասխան 121 երկրների դասակարգումից և երկրների 9 խմբավորումներից, որում 10 գնահատականը տրվում է ամենաբարձր, իսկ 0-ն ամենացածր արժեքներին:

որակական գործոնային փոփոխականների բավական լայն շրջանակ, դրանք ամփոփում է գիտելիքի տնտեսության զարգացման համար առանցքային չորս ամփոփ խմբերում.

- տնտեսական և ինստիտուցիոնալ բարենպաստ միջավայր՝ առկա և նոր գիտելիքի արդյունավետ օգտագործման և ձեռներեցության բարգավաճման խթանման համար,

- կրթված և տեղեկացված ազգաբնակչություն, որը կարող է հաջողությամբ ձևավորել, տարածել և գործածել գիտելիքը,

- տեղեկատվության դինամիկ ենթակառուցվածք, որը կարող է կազմակերպել տեղեկատվության արդյունավետ փոխանցումը, տարածումը և մշակումը,

- ընկերություններից, հետազոտական կենտրոններից, համալսարաններից, խորհրդատուներից և այլ կազմակերպություններից կազմված նորարարության արդյունավետ համակարգ, որը կարող է միանալ գլոբալ գիտելիքին, յուրացնել այն ու հարմարեցնել տեղական կարիքներին և ստեղծել նոր տեխնոլոգիաներ:

ԳԳՄ-ի մեջ ներառված են նաև մի շարք այլ փոփոխականներ, որոնք հետևում են տնտեսության ընդհանուր կատարողականին: Այս փոփոխականները օգնում են պարզել, թե իրականում որքանով է տնտեսությունը հաջողությամբ գործածում գիտելիքն իր տնտեսական և սոցիալական զարգացման համար:

Ըստ այդմ՝ գիտելիքահեն տնտեսություն ձևավորելու համար մեծապես կարևորվում է կրթական համակարգը, ինչն էլ ապահովում է տնտեսության ինովացիոն հենքը. արդյունքում բարձրանում է հասարակության արտադրողականությունը, հետևաբար նաև ընդհանուր բարեկեցությունը:

Այսինքն՝ կրթության ոլորտը գիտելիքի, թերևս, ամենագլխավոր հիմնասյունն է, քանի որ ապահովում է մարդ-

կային կապիտալի վերարտադրությունը: Այստեղ կարևորվում է թե՛ կրթական համակարգը աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման խնդիրը, թե՛ շարունակական կրթության՝ «կրթություն ամբողջ կյանքի ընթացքում» սկզբունքի ներդրման խնդիրը: Այս առումով՝ կրթական համակարգի բարեփոխումները կարող են բերել ինչպես անհատական շահերի ավելի լավ բավարարման, այնպես էլ ընդհանուր տնտեսական դրական տեղաշարժերի:

Տեխնոլոգիաների փոխանցման կառույցների (գիտատեխնիկական կազմակերպությունների) օժանդակման մեխանիզմները նույնպես կարևոր բաղադրիչ է՝ գիտելիքահեն տնտեսությանն անցման ճանապարհին, ինչը նշանակում է, որ հիմնական շեշտը պետք է դնել այն մեխանիզմների վրա, որոնք կօժանդակեն ընկերություններին՝ կատարելու ներդրումներ տեխնոլոգիաների յուրացման և մշակման բնագավառում:

Չնայած կրթության ոլորտը Հայաստանի ավանդաբար զարգացած ոլորտներից մեկն է, և ունի մարդկային կապիտալի լուրջ ներուժ, այնուամենայնիվ երկրում այսօր դեռևս ամբողջությամբ չեն իրացվում նրա ներդրումային հնարավորությունները: Ընդհանուր առմամբ՝ վերջին տարիներին Հայաստանը, թեև աննշան, բայց բարելավել է գիտելիքի տնտեսության ծրագրի իր կատարողականը՝ հայտնվելով միջին ցուցանիշներով երկրների շարքի ամենացածր մակարդակում: Հայաստանն բավական հետ է ՏՀԶԿ և ԵՄ, ինչպես նաև նախկին սոցիալիստական երկրներից, որոնք կարողացել են ավելի լավ դրսևորվել իրենց՝ գիտելիքների գործնական կիրառության և արագ փոփոխվող միջավայրի մեջ:

Համաձայն Համաշխարհային բանկի կողմից հաշվարկված [19] գիտելիքի տնտեսության ինդեքսի՝ Հայաստանը՝

1. «ջանքեր գործադրող երկրների» խմբում է Ռուսաստանի, Ուկրաինայի, Կոստա Ռիկայի հետ միասին.



2. ըստ նշված չորս ամփոփ խմբերի՝ հիմնասյուների, ցուցանիշներն առանձնանում են արտասովոր անհամաչափությամբ, մասնավորապես՝

- տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմով այն է զբաղեցնում բարձր դիրքեր.

- տեղեկատվական համակարգերի ներդրման և տարածվածության գնահատականով գտնվում է ցածր մակարդակում.

- կրթության ոլորտի ցուցանիշները բավարար են, թեև զիջում են Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներին.

- չնայած մարդկային կապիտալի համեմատաբար բարձր գնահատակա-

նին՝ այն, այնուամենայնիվ, չի կարողանում ապահովել նորարարության առաջընթաց, ինչն էլ հենց պայմանավորում է երկրի նորարարական ցածր մակարդակը:

Այսպիսով՝ հասարակական-տնտեսական զարգացման ներկա փուլում Հայաստանն այլևս չունի այլընտրանք, քան մրցունակության և ընդհանուր գործնային արտադրողականության բարձրացմանն ուղղված քաղաքականության իրագործումն է: Այստեղ կարևոր է (շեշտը դնելով գիտելիքի զարգացման չորս հենասյուների զարգացման վրա) ապահովել հետևողական անցում «գիտելիքահեն տնտեսության»:

### ՊԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. World Bank Institute. World Development Indicators, 2013, [www.worldbank.org/depweb/global](http://www.worldbank.org/depweb/global).
2. Kuznets S., Modern Economic Growth: Findings and Reflections, Nobel Lecture Delivered in Stockholm. American Economic Review 63, 1973.
3. Гусарова В. Ю. Типология факторов экономического роста и их развитие. Вестник ТИСБИ, Изд. центр ТИСБИ, 2009.
4. Pritchett L. Understanding Patterns of Economic Growth // The World Bank Economic Review. 2000. Vol. 14, N 2.
5. Сорос Дж. Переломный момент // [www.Finam.ru](http://www.Finam.ru), 02.02.2009.
6. Cobb C. W. and P. H. Douglas. A theory of production. Supplement, Papers and Proceedings of the Fortieth Annual Meeting of the American Economic Association. American Economic Review 18(1).
7. Griliches – Griliches Z. // Journal of Economic Literature. 1996. Vol. 34. № 3.
8. The Solow–Swan model with a bounded population growth rate”, Journal of Mathematical Economics, Volume 42, Issue 1, February 2006.
9. Solow R. A Contribution to the Theory of Economic Growth // Quarterly Journal of Economics. 1956, Vol. 70.
10. Денисон Э. Исследование различий в темпах экономического роста.— М., 1971 г.
11. Шараев, Ю. В. Теория экономического роста: учеб. Пособие для вузов — М.: Изд. дом ГУ ВШЭ, 2006.
12. Romer P. Increasing Returns and Long-Run Growth // Journal of Political Economy. 1986. Vol . 94, N 5.
13. Нуреев Р.М. Экономика развития. Учебник. — М.: Норма, 2008.
14. Aghion P. Howitt P. A, Model of Growth through Creative Destruction. Econometrica. 1992.
15. Ս. Ս. Սարիբեկյան, Հասարակական-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները, Եր., 2012:
16. The Global Competitiveness Report, 2014-2015, World Economic Forum, Geneva, 2014.
17. Tehmina S. Khan, “Productivity Growth, Technological Convergence, R&D, Trade, and Labor Markets: Evidence from the French Manufacturing Sector”, IMF working paper, WP/06/230, 2006.
18. Derek H. C. Chen and Carl J. Dahlman, “The Knowledge Economy, the KAM /Knowledge Assessment Methodology/ Methodology and World Bank Operations”, The World Bank Washington DC 20433, 2005.
19. <http://www.worldbank.org/etools/kam2/KAM-3/2013-2014/>.

СОВРЕМЕННЫЕ ПРОЯВЛЕНИЯ КОНЦЕПТУАЛЬНЫХ ТРАНСФОРМАЦИЙ ОБЩЕСТВЕННО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ: ЗНАНИЕ И ОБРАЗОВАНИЕ В ЭТОМ КОНТЕКСТЕ.

**АМАЛИЯ САРИБЕКЯН**

Руководствуясь идеологическими и концептуальными трансформациями, современный период общественно-экономического развития получил интересные проявления. Самой важной особенностью настоящего этапа глобального развития является переход в сферу наукоемких и высокотехнологических отраслей. Это оказывает решающее влияние на преобразование общественного образа жизни как на экономическом, так и на социальном, экологическом и демографическом уровнях. Здесь решающим фактором становится человеческий ресурс как носитель и потребитель знаний. С этой точки зрения знание является ключевым в современной экономической и общественной действительности Армении. Крайне актуальным становится выдвижение таких задач, как необходимость правильного понимания роли знания, преодоление путей его освоения и применения, и в этом контексте важным является целевое развитие образования.

MODERN MANIFESTATIONS OF CONCEPTUAL TRANSFORMATIONS OF SOCIAL AND ECONOMIC DEVELOPMENT: THE ROLE OF KNOWLEDGE AND EDUCATION IN THAT CONTEXT

**AMALYA SARIBEKYAN**

*Professor of the Chair of Management and Business, Faculty of Economics and Management, YSU*

From the point of view of ideological and conceptual transformations, the modern period of social and economic development has acquired interesting manifestations. The most important peculiarity of the present stage of global development is the transition to the sphere of knowledge-intensive and high tech branches. It greatly influences the transformation of the social way of living at economic, public, ecological as well as demographic levels. Here, the human resource as a knowledge bearer and consumer is the most decisive factor. From this point of view, knowledge becomes crucial in modern economic and social reality of Armenia. So, the promotion of such problems as the necessity of the adequate perception of knowledge, overcoming the ways of its mastering and application and, consequently, the purposive education development becomes extremely urgent.